գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, հետևաբար նման պայմաններում հայցը ենթակա է մերժման:

6. Դատական ծախսերը

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում այլ դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ ««Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20» ծածկագրով ընթացվակարգի մրցույթի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել ընդունելու համապատասխան որոշումներ, որոնցով չեղյալ կհայտարարվեն «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/20» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.06.2023 թվականի թիվ 4 նիստի արձանագրության թիվ 1-ին կետով կայացված որոշումը, որով մերժվել է Հրավերի թիվ 1-ին չափաբաժնի մասով ամենացածր գինը առաջարկած մասնակից «Խաչպար» ՍՊ ընկերության հայտը, ինչպես նաև այդ արձանագրության թիվ 3-րդ կետի 1-ին ենթակետով կայացված

որոշումը, որով Հրավերի թիվ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությունը» պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**